



85. ԷՍ ԷԼ ՍԸՀԵՆՑ ՄՆԱԼՈՒ ՉԻ

Եփ ա ինրմ, եփ չի ինրմ, ոչ օվ կարալ չի ասի, Համա մին ախ-կադ մարթ ա ինրմ, ըստան օխտը ախճիկ ու մին մինուճար տղեն ա ինրմ: Ախկաղըս իչքան չըրչարվրմ ա, տանջվրմ ա, կարրմ չի, Թա՞ծերը ծերին հըսցընի, քո՞ւլփաթը պահի: Տղին վեր ա ունրմ տանրմ մին Հարուստի տուն, էրկու տարով նոքար ա տալիս, Հախն էլ էն կլխիցը առնրմ պերրմ, որ տունը յուլ տանի:

Հարուստն էլ փրոնրմ ա էս տղին եզան հետ վեսկի լծրմ, ուրա՞ն չիմ արտերը վարրմ: Տղեն սուսուփուս լիճը քաչրմ ա, հալից ընգ-նրմ, Համա ծըպտուն էլ ա հանրմ չի, ուրա՞ն ծանդըր խաչը տանրմ ա:

Մին անքամ էլ հերը քինրմ ա տղին տենալի, որ տենրմ ա, Թա՞նչ ինչ օրի յա ընգել, լաց ա ինրմ, տղեն ասրմ ա. — Դարդ մի՛ անիլ, ա՛հ հեր, շատը քինացել ա, քիչն ա մնացել, էս էլ սըհենց մնալու չի:

Պայց դե հեր ա, էլի, սիրտը քրքրվրմ ա, մըռմըռմ, մազերը պոկիլով տուն ա կալիս: Ո՛չ փողն ա ինրմ, որ տանի տա Հարուստին, տղին ազադի տանջանքից, ո՛չ էլ վաղեն ա Թըմամած ինրմ: Սիրտը կրակված, հոքին էրիլով, ծեռը կրակին ա քցրմ, Համա պան չի ընգնրմ ճանգը:

Հենց էտ օրերին էլ երգրի Թաքավորը մեռնրմ ա, Թաքավորու-թունը մնրմ ա անդեր, չո՞ւնքի Թաքավորին ժառանգ չի ինրմ, որ հոր տեղը փրոնի: Երգրի մեծամեծնին ու Թավաղնին վըհաքվրմ են, Թա՞նց անեն, ո՞ւմ տինեն Թաքավոր: Նեկը խելքի են տալիս, եղո մին դուչ են պաց Թողրմ, որ էս դուչը ում կլխին վե կա, ընդան էլ տինեն Թաքավոր:

Ղուչը Թրոնրմ ա, Թրոնրմ, հենց հըսնրմ ա Հարուստի արտին, մին քանի անքամ պտուտ ա կալիս հու նըստրմ եզան նհետ լիճ քաչող տղի ուսին: Դե մեծամեծնին էլ առող-փառող էս տղին պե-րրմ են, տնրմ Թաքավոր:

Գյանքըմը ոչ մին լավ օր տեսած ոչ տղեն էլ ըսկսրմ ա քնսիբ-ների Թասիբը պահիլը, խանգնի մհար ընդանցանա խարջ ու բոր-

Ղի կեսն ա վրհաքըմ, քսսիբններին ծուռ աչկով եղողների կլոխն ա թոցնիլ տալիս:

Ըստան թողանք, ուրն թաքավորութունը անի, մենք խնայանք տանք ախկաղիցը:

Վանդեն որ թրմամբն ա, տղի հերը քինըմ ա հարուստի կուչտը, որ տղին պերի տուն, տենըմ ա՝ տղեն կա ոչ: Հարուստը ասըմ ա, թն փախել ա, հերը վհատըմ չի: Ուրոնր յախա յեն փռոնըմ:

Հերը տղին ա ուզըմ, հարուստը ուրն փողը: Վերչը որ կարըմ չի հարուստի հախիցը կն, կանգնտի յա քինըմ թաքավորի կուչտը:

Թաքավորը ըստան նրստըցնըմ ա կոխկին, ասըմ.—Ա՛ հեր, էլի ի՞նչ ցավ ունես, խի՞ ես եկել:

—Թաքավորն ապրած կենա,—ասըմ ա ախկաղը,—ես իմ մի-նուճար տղին տվել ի մին հարուստի կուչտ՝ նոքար, թնհր չունիմ՝ ծեղրս տանտանկ էր. էս հեխճը չունը կերածն էլ փռոնըմ էր տղիս եզան նհետ բարաբար վեսկի էր լծըմ: Վերչը եփ վանդեն թրմամեց, քինացի, թն տղիս պերեմ, տեսա կա ոչ: Ասըմ ա՝ փախել ա, փողերս ե՛տ տու: Ոնց որ իրեըմ ա, մինըճար խոխիս կըլոխը էս ավազակը կերել ա:

—Ձէ՛, ա՛ հեր,—ասըմ ա թաքավորը,—քու տղեն ես եմ, որ կամ, ոչ օվ ինձ բաղի չի տվել:

Հորը պատմըմ ա կըլխովը եկածը:

Հերը, որ մին լավ վանձվողոդ ա անըմ, տենըմ ա, իսկականիցը ուրն տղեն ա, ասըմ ա.—Փառքըտ շատ, Աստո՛ծ, որ տղիս լուծը փոխել ես թաքավորական թախտով:

—Փառք մի՛ տու, ա՛ հեր, էս էլ սըհենց մնալու չի,—ասըմ ա տղեն,—խնդնիցը մին խուրջին ոսկի հու արծաթ ա տալիս հորը, դըրկըմ տուն:

Խելաք վախտ որ անց ա կենըմ, մեծամեծնին էս թաքավորին սպանըմ են, եղով մեչներիցը բըստըմ, թն թաքավորը որսի քինացած վախտը ջանավարի ռեխ ա ընգել մեռել: Թաղըմ են թաքավորին, վրեն քար քաշըմ, քարին էլ կիրած. «էս էլ սըհենց մնալու չի»:

Շատերն են կալիս, անց կենըմ անցավոր ախչարքիցը, ով էլ կարթըմ ա թաքավորի տապանաքարին կիրածը, կըլոխը տուրոնր ա տալիս, ծիծաղըմ, քինըմ:

Մին օր էլ թչնամու դոչունը մընըմ ա էս երգիրը, բարբաղ անըմ:

Տապանաքարն էլ ա հողին հըվասարվըմ ու էտ պողորից մինակ էս գըռլցն ա մընըմ, որ պերանից պերան աս կենալով հըսել ա մեզ: